Սարգիս Կարապետյան

ՕՏԱՐՄԱՆ ՀԵԳԵԼՅԱՆ ԵՎ ՄԱՐՔՍՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ)

Օտարում, առարկայացում, օբյեկտիվացում, ապաառարկայացում, ինքնագիտակցություն, ազատություն, բյուրոկրատիզմ, աշխատանքի օտարում

«Օտարումը» ժամանակակից սոցիալական և քաղաքական փիլիսոփայության հիմնարար հասկացություններից է: Օտարման դասական հայեցակերպերը մշակվել են այնպիսի գերմանացի մտածողների կողմից, ինչպիսին են Գ. Հեգելը, Լ. Ֆոյերբախը և Կ. Մարքսը: Դեռևս 1805-1806 թթ. Ենայի ձեռագրերում Հեգելը զարգացրել է ոգու «օտարման-արտաքնայնացման» մասին իր հայեցակարգը, որը ֆրանսիական լուսավորիչների և անգլիական դասական քաղաքատնտեսության՝ օտարմանը վերաբերող դիտարկումների ուսումնասիրության ընդհանրացումն էր: Հեգելն օտարումը նույնացրել է առարկայացման, իրայնացման հետ: Ըստ Հեգելի, մարդկային գործունեության ցանկացած առարկայացում մարդու գործուն ուժերի և ընդունակությունների փոխարկումն է կամ անցումը շարժման ձևից առարկայի ձևի կամ առարկայականության:

Օտարումը «զուտ» գաղափարից բնության, և ապա ոգու առաջացման գործընթաց է: Պատմությունը ոգու իրացման, նրա օտարման և օտարումն հաղթահարելու ասպարեզ է: Բնությունը հավերժ օտարված մի բան է, որի պատճառով, ըստ Հեգելի, բնության մեջ զարգացումը թվացյալ է: Պատմությունը գաղափարի օտարումն է ժամանակի մեջ, նրա իսկական զարգացումը: Հետևաբար, օտարման սուբյեկտը բացարձակ գաղափարն է: Հեգելի դիտարկմամբ օտարման սուբյեկտը լիովին խզում է կապերը կոնկրետ մարդու հետ և ներկայացնում է բացարձակ գաղափարը, որի զարգացման ձևերից ոգին կապված է մարդու հետ, հանդիսանում է նրա էությունը՝ ինքնագիտակցությունը, որը ձգտում է «իրացնել իր հասկացությունը և ամեն ինչում գիտակցել ինքն իրեն: Ուստի նա ա) գործուն է և ունակ վերառելու առարկաների այլագոյը և հաստատելու նրանց որպես իրեն հավասար, բ) ունակ է ինքն իրենից օտարվելու և դրա միջոցով իրեն առարկայացնելու և լինելու գոյավոր: Ինքնագիտակցության որոշակի դառնալը (das Bestimmt Werden) միաժամանակ նրա ինքնաորոշակիացումն է՝ որպես առարկա»:[1] Մարդկային էությունը, ըստ Հեգելի, հավասարժեք է *ինքնագիտակցությանը*: Այդ իսկ պատճառով, մարդկային էության ցանկացած օտարում ոչ այլ ինչ է, քան ինքնագիտակցության օտարում: Ինքնագիտակցության օտարումը չի դիտվում որպես մարդկային էության իրական օտար-

[1] Հեգել Գ.Վ.Ֆ., Փիլիսոփայության ներածություն: Փիլիսոփայական պրոպեդևտիկա, Ե., ՀՊՀ, 1964, էջ 138:

ման արտահայտություն: Ընդհակառակը, իրականը՝ իր քողարկված և փիլիսոփայությամբ բացահայտվող իմաստով ոչ այլ ինչ է, քան իսկական մարդկային էության, ինքնագիտակցության օտարման դրսևորում: Գիտությունը, որը բացահայտում է այդ իրողությունը, կոչվում է երևութաբանություն (ֆենոմենոլոգիա): Այդ իսկ պատճառով օտարված առարկայական էությանը ցանկացած հակադիր յուրացում դիտվում է որպես էության ներառում ինքնագիտակցության մեջ: Իր էությանը տիրացած մարդը հենց ինքնագիտակցությունն է, որ տիրացել է իր առարկայական էությանը:

Հեգելի բնորոշմամբ, գիտակցության առարկայի հաղթահարումը կատարվում է, երբ առարկան գիտակցությանը ներկայանում է որպես, հեգելյան խոսքերով, «անհետացող»: Ընդ որում, երբ ասում ենք, որ առարկան, որպես այդպիսին, գիտակցությանը ներկայանում է որպես անհետացող, դա ոչ այլ ինչ է, քան առարկայի վերադարձը սեփական ինքնությանը:

Ինչպես «հասարակական դաշինքի» տեսաբանների, այնպես էլ Հեգելի համար, օտարման հակոտնյան ազատությունն է: Վերջինս նշանակում է և՛ օտարում, և՛ դրա վերառում[1]: Ազատությունը ոգու իսկական էությունն է: Սկզբնապես ոգին ազատությանը իշխում է որպես հնարավոր նպատակ[2]: Միայն առարկայորեն օտարված ձևի մեջ լինելով և այն վերառելով՝ ոգին կարող է ազատ լինել: «Ոգու հասկացության ողջ զարգացումը միայն ոգու ինքնաազատագրումն է առկա կեցության բոլոր ձևերից, որոնք չեն համապատասխանում նրա հասկացությանը»[3]: Այդ իսկ պատճառով օտարումը միաժամանակ և՛ նրա վերառումն է, և՛ ազատության իրացումը՝ էությանը հակադիր և աղավաղված ձևով:

Հեգելը ազատությունը տեսնում է ոչ թե նյութականի, այլ հոգևորի մեջ: «Հասկացությունը՝ ազատությունը ըստ էության, նշանակություն ունի միայն որպես մտածողություն»:[4] Ե՛վ առանձին մարդը, և՛ ժողովուրդները ազատ են միայն ազատության էության գիտակցման շնորհիվ: «…Ազատությունը… նախևառաջ… հասկացություն է, ոգու և սրտի սկզբունք, և ինքն է որոշում իր զարգացումը»[5]: Հետևաբար, մարդը ազատությունն ըմբռնում է իբրև գիտակցված ազատություն: Հենց դրա համար էլ օտարման հաղթահարումը դիտվում է որպես ինքնագիտակցման գործառույթ:

Հեգելը, զուգակցելով իդեալիստական ընկալումը պատմականության սկզբունքի հետ, ստրկության և առհասարակ հարկադրանքի ողջ համակարգի նշանակությունը գնահատում է այսպես. «Զզգալով իր վրա այդ հարկադրանքը, որը կոտրում է անձի ինքնակամությունը, ոչ մեկը չի կարող դառնալ ազատ, բանական և հրամայելու ունակ: Որպեսզի դառնան ազատ, որպեսզի ձեռք բերեն ինքնկառավարման ունակություններ, բոլոր ժողովուրդները նախապես պետք է անցնեն խիստ կարգապահության

---

[1] Гегель. Энциклопедия философских наук. Т. 3, М.: Мысль, 1977, с. 25

[2] Նույն տեղում, էջ 26:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

և տիրոջ կամքին ենթարկվելու միջով»[1]: Հեգելը այսպիսով մարդուն նույնացնում է նրա ինքնագիտակցությանը: Դա, մասնավորապես, բխում է առարկայացումն օտարման հետ նույնացնելու հեգելյան դրույթից. մարդու էությունը չի կարող համարվել օտարման ձև, ուստի այն չի կարող առարկայական լինել: Ըստ հեգելյան ընկալման՝ օտարումը վերառնվում, հաղթահարվում է ինքնագիտակցությամբ, երբ ստրուկը գիտակցում է իր էությունը որպես ազատ էություն: Ազատության ինքնագիտակցումն է որոշում գործելու կամքը: Հեգելը քաղաքական վերասերումների թվին էր դասում նաև պատրանքային աշխարհընկալումը, որը հատուկ է «լուռ ծառայող» մարդկանց, այսինքն՝ քաղաքական բռնապետությանը հլու-հնազանդ ծառաներին[2]: Այստեղ պետք է թեկուզ հարևանցիորեն անդրադառնալ պետություն-քաղաքացիական հասարակություն հարաբերության վերաբերյալ Հեգելի հայեցակարգային որոշ պատկերացումներին: Նա հանճարեղորեն նշում է, որ քաղաքացիական հասարակության մեջ պետությունը փնտրում է սեփական նույնականությունը և այն գտնում է «պետության ոգիների» մեջ[3]: Հենց այդ ոգիներն են որոշում քաղաքական օտարվածության բնույթը: Ըստ Հեգելի, տվյալ ժողովրդի պետական կարգը «ընդհանրապես կախված է նրա ինքնագիտակցության զարգացածությունից ու բնույթից. դրանում ամփոփված է սուբյեկտիվ ազատությունը, հետևաբար նաև պետական կարգի իրականությունը»[4]: «Յուրաքանչյուր ժողովուրդ ունի այն պետական կարգը, որը նրան համապատասխանում և ընդունելի է»,– նշում է նա[5]: Իտալիային և Իսպանիային պետականություն շնորհելու Նապոլեոն Բոնապարտի փորձերը քննադատելով՝ մեծ փիլիսոփան ընդգծում է, որ «… պետական կարգը ինչ-որ ստեղծված մի բան չէ. այն դարերի աշխատանքի արդյունք է, այն բանականի գաղափարն ու գիտակցությունն է այնքանով, որքանով որ զարգացած է տվյալ ժողովրդի մեջ… Ժողովուրդը պետք է զգա, որ իր պետական համակարգը համապատասխանում է իր իրավունքին և իր վիճակին, հակառակ դեպքում կարող է, իհարկե, արտաքնապես առկա լինել, սակայն չի ունենա ո՛չ նշանակություն, ո՛չ արժեք»[6]: Սա նշանակում է, որ չի կարելի ժողովրդին, նրա պետականության «մարմնին» արհեստականորեն պատվաստել նրա քաղաքական գիտակցությանն ու հոգեկերտվածքին խորթ պետկառավարման համակարգ:

Հեգելը «Իրավունքի փիլիսոփայություն» աշխատության մեջ քաղաքացիական հասարակության հիմքերից առանձնացնում է աշխատանքը, որը բավարարում է մարդկային պահանջմունքները՝ ստեղծելով սպառման առարկաներ (աշխատանքի մեջ այդպիսով առարկայացվում, օտարվում է մարդկային ոգին), աշխատանքը նաև ձևավորում, զարգացնում է մարդուն: Ըստ Մարքսի՝ «Ոգու ֆենոմենոլոգիայի» մեջ Հեգելը մարդու ինքնաձևավորումը դիտել է որպես առարկայացման

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 274

[3] Гегель Г. Философия права. М., 1990, с. 315.

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում:

և ապաառարկայացման, օտարման և նրա հաղթահարման գործընթաց[1]: Հեգելը «Գիտի և ճանաչում է աշխատանքի միայն մեկ տեսակ՝ վերացական-հոգևոր աշխատանքը»[2]: Ճանաչելով աշխատանքի միայն վերացական-հոգևոր տեսակը՝ «Հեգելը որպես աշխատանքի էություն ճանաչում է այն, ինչն ընդհանրապես փիլիսոփայության էությունն է, այն է՝ իրեն ճանաչող մարդու ինքնօտարումը կամ իր մասին խորհրդածող ինքնօտարված գիտությունը»[3]:

Հեգելն ընդգծում է նաև աշխատանքի բացասական կողմերը (աշխատանքի բաժանման անբարենպաստ ազդեցությունը մարդու ձևավորման վրա): Նա մատնանշում է արտադրության ընդլայնումը, միօրինակ աշխատանքի բացասական ազդեցությունը աշխատանքային հմտությունների վրա, որի հետևանքով «… հմտությունը դառնում է մեխանիկական և հնարավոր է դարձնում մարդկային աշխատանքի փոխարինումը մեքենայով»[4]: Հեգելը նշում է աշխատանքի բաժանման օտարացնող ազդեցությունը, սակայն դրա վերլուծությունը չի հասցնում աշխատանքի օտարման հասկացության մակարդակի, թեև բազմիցս նշել է, որ աշխատանքը մարդկային ոգու օտարումն է (առարկայացումը): Հեգելը չի քննում աշխատանքի օտարման հասկացությունը՝ համարելով, որ նյութական աշխատանքը միայն հոգևոր աշխատանքի օտարված այլակեցությունն է: Այդ իսկ պատճառով աշխատանքի էությունը (ոգին) չի կարող օտարված լինել:

Խորհրդային փիլիսոփա Մ. Օվսյաննիկովը նշում է. «Հեգելի մոտ նյութական գործունեությունը հանդես է գալիս որպես հոգևոր գործունեության տարատեսակություն»:[5] Մարդկային ինքնագիտակցությունը դրսևորվում է աշխատանքի արգասիքում: Ընդ որում ձևը՝ որպես «առարկայականորեն բացասական» երևույթ կամ «օտար էություն», վերառված է[6]: Խորհրդային փիլիսոփա և սոցիոլոգ Յու. Դավիդովը նշում է, որ Հեգելն օտարումը վերառված, հաղթահարված է համարում, քանի որ «… այն հաջողվել է ճանաչել»[7]: Ուստի և օտարման վերառումը տեղի է ունենում գիտակցության մեջ՝ գիտակցության շնորհիվ: Այդպիսով, Հեգելը օտարումը հանգեցնում է գիտակցության ֆենոմենին, իսկ դրա վերառումը համարում է տեսական քննադատության կարևոր խնդիրը:

Որքան ամբողջական է ուսմունքը և համապարփակ փիլիսոփայական համակարգը, այնքան շատ են թե՛ նրա հետևորդները, թե՛ հակառակորդները: Ուշագրավ է, որ ժամանակին Հեգելի հետևորդները՝ Լ.Ֆոյերբախը և Կ.Մարքսը, ոչ միայն հեռացան հեգելականությունից, այլև դարձան Հեգելի և հեգելականության հետևողական քննադատները: Լ.Ֆոյերբախը կրոնի էությունը տեսնում էր նրանում, որ իրենից

---

[1] Маркс К., Энгельс Ф. Соч. 2-е изд. т. 42, с. 158-159.

[2] Маркс К., Энгельс Ф. Из ранних произведений. М., 1956, с. 527.

[3] Նույն տեղում, էջ 628:

[4] Гегель. Энциклопедия философских наук, т. 3, с. 343.

[5] Овсянников М.Ф. Философия Гегеля. М., 1959, с. 63.

[6] Гегель. Энциклопедия философских наук, т. 3, с. 106.

[7] Давидов Ю.Н.,Труд и свобода. М., 1962, с. 65.

առանձնացնելով իր լավագույն որակները՝ մարդը դրանք բարձրացրեց բացարձակի աստիճանին և վերածեց մտացածին գերբնական էակի՝ աստծո անկապտելի հատկանիշների՝ այդ ստեղծովի Աստծուն թույլ տալով իշխել իր վրա: Օտարման սուբյեկտն այստեղ մարդն է: Բնությունը, ըստ Ֆոյերբախի, մարդու գործունեության բնական հիմքն է ու միջավայրը: Սակայն մարդու առանձնահատկությունը ոչ թե նրա բնութենական լինելու, այլ մտածողության մեջ է, որի շնորհիվ նա առանձնացնում է գոյությունն իր էությունից, իսկ այնուհետև ներգործում այդ գոյության վրա: Երկրորդ առանձնահատկությունը մարդկային պահանջմունքների մեջ է, որոնցից հաղորդակցվելու պահանջմունքը հենց մարդու էությունն է: Ըստ Ֆոյերբախի՝ մարդկային էությունն է օտարման առարկան: Կրոնում օտարումն այն է, երբ մարդիկ «ցեղային էությունն» ընկալում են ոչ թե իրենց, այլ աստծո էության տեսքով: «Քրիստոնեական կրոնի մեջ,– նշում է Ֆոյերբախը,– արտահայտվում է մարդու վերաբերմունքը ինքն իր, կամ ավելի ճիշտ, իր էության նկատմամբ, որը նա դիտում է որպես ինչ-որ օտար բան: Աստվածային էությունը ոչ այլ ինչ է, քան մարդկային էություն …, որը երկրպագվում է որպես օտար, առանձին էություն»[1]: Օտարման հաղթահարումը, ըստ Ֆոյերբախի, պետք է իրագործվի մարդկանց լուսավորելու միջոցով: Փիլիսոփան հանդես է գալիս ամբողջական մարդու վերականգման գաղափարով, որի մեջ պետք է միմյանց համերաշխվեն զգայականությունը, բանականությունը, բարոյականությունը և կամքը: Ըստ նրա, մարդու էության իրականացումը կապված չէ մարդու զգայական-առարկայական գործունեության, հասարակական հարաբերությունների վերափոխման հետ: Ֆոյերբախը, շրջանցելով մարդկային էության օտարման կոնկրետ պատճառների հարցը, օտարման հիմնական աղբյուրը համարում է մարդու բնությունը: Այս առումով Կ.Մարքսը նշում է. «Գլխավորը մնում է դեռևս չարված: Այսինքն՝ այն հանգամանքը, որ երկրային հիմքն իրեն առանձնացնում է ինքն իրենից և իրեն տեղափոխում երկինք՝ որպես ինչ-որ ինքնուրույն թագավորություն, որը կարող է բացատրվել միայն երկրային հիմքի ինքնամասնատմամբ և ինքնահակասականությամբ»:[2]

Օտարման մարքսյան հայեցակարգի բնութագրման առումով հարկ է նախապես մի քանի դիտարկումներ անել: Եթե Հեգելը օտարումը հասկանում էր գիտակցության զարգացման տեսանկյունից, ապա Մարքսի համար օտարման առարկան մարդու հոգևոր ուժերն են: Ըստ Մարքսի, օտարման ֆենոմենը մարդկային պատմության, հատկապես հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման անկապտելի հատկանիշն է: Օտարումը առաջանում է աշխատանքի բաժանման, մասնավոր սեփականության և պետության կազմավորման հետևանքով: Քաղաքական օտարվածությանը Կ.Մարքսն անդրադարձել «Հռենոսյան լրագիր» թերթում (1842-43 թթ.)՝ շոշափելով կենսահույզ քաղաքական հարցեր: 1843 թ. մարտի 13-ին՝ Ռուգեին ուղղված նամակում նա նշել է, որ Ֆոյերբախի աֆորիզմներն իրեն չեն գոհացնում, քանզի

[1] Фейербах Л. Избр. философ. произведен. т.2, М., Госполитиздат, 1955, с. 43.

[2] Маркс К., Энгельс Ф. Соч. 2-е изд. т. 3, с. 2.

Ֆոյերբախն ավելի շատ ծանրանում է բնության, քան քաղաքականության վրա[1]: Քաղաքական օտարումը վերաբերում է ինչպես իշխանությունից ժողովրդի օտարմանը, այնպես էլ դրա վրա հիմնված պետական կառավարման օտարված ձևին՝ բյուրոկրատացմանը:

Կ. Մարքսը առաջ է քաշում ներկայացուցչական համակարգի նպատակահարմարության հարցը, քանի որ ներկայացուցչությունը, հրապարակայնության բացակայության պայմաններում իրականացվում է ի վնաս իսկական ժողովրդավարության[2]: Ներքևից իրականացվող հասարակական հսկողության բացակայության պարագայում ժողովրդի ներկայացուցիչները անտեսում են ժողովրդի շահերը՝ նենգափոխելով անձնական ու խմբակային շահերով: Մարքսն ընդգծում է, որ ներկայացուցչության համակարգի պարագայում քաղաքական գործառույթները շրջանցում են անհատներին, որը և հանգեցնում է նրանց հասարակական պասիվությանը: «Ժողովուրդը ... կամ մասնակիորեն ընկնում է քաղաքական անհավատության, քաղաքական անվստահության մեջ կամ երեսը դարձնելով պետական կյանքից՝ վերածվում է մարդկային ամբոխի, որն ապրում է միայն մասնավոր կյանքով»[3]: Քաղաքական օտարումը հանգեցնում է նրան, որ համընդհանուր շահերի ոլորտում անտեսվում են ժողովրդի մասնավոր շահերը, ինչպես նաև ճնշվում է նրա ակտիվությունը, քաղաքացին զրկվում է կառավարման և ինքնակազմակերպման իրավունքից, տեղի է ունենում անձի «արժեզրկում»: Պետությունում քաղաքացիները բաժանվում են կառավարողների և կառավարվողների[4], որոնց փոխհարաբերություններում, ըստ Մարքսի, առանձնահատուկ կարևորություն է ստանում շահի գործոնը: Հռենոսյան լանդտագի գործունեության օրինակով ցույց է տրվում, թե ինչպես է պետությունը վերածվում «մասնավոր շահի գերակայության միջոցի»:

Բյուրոկրատական կազմակերպությունը, մարքսյան բնութագրմամբ, հիերարխիկ կառուցվածք ունի, աչքի է ընկնում իշխանության հեղինակության անձեռնմխելիությամբ, կառավարման բարձր օղակներին ստորին օղակների կոշտ ենթակայությամբ, կառավարման սխեմատիկ, բյուրոկրատական գիտակցությամբ: Նրան բնորոշ է բյուրոկրատիզմի այնպիսի մի դրսևորում, ինչպիսին է գրաքննությունը՝ «խելքի բյուրոկրատիան»: Գրաքննության վերջնանպատակն է պատժել մարդկանց իրենց անկախ մտածելակերպի համար: Մարքսի բնութագրմամբ բյուրոկրատիզմը առանձին մարդկանց, չինովնիկների հատկանիշը չէ, այլ՝ ընդհանուր կարգ: Այն ի հայտ է բերում «գործող անձանց կամքի մեջ ընդհանուր հարաբերությունների հզոր ազդեցությունը»[5]:

Բացահայտելով բյուրոկրատիայի բացասական դերն անձի սոցիալական ակտիվության ոլորտում, Մարքսը բյուրոկրատիզմին՝ քաղաքական օտարման այդ ձևին,

---

[1] Маркс К., Энгельс Ф. Соч. 2-е изд. т. 27, с. 374-375.

[2] Նույն տեղում, էջ 49:

[3] Маркс К., Энгельс Ф. Соч. 2-е изд. т. 1, с. 69.

[4] Նույն տեղում, էջ 202:

[5] Նույն տեղում, էջ 212:

հակադրում է ազատությունը, որը մարդու և յուրաքանչյուր կազմակերպության նախասկզբնական էությունն է: Նա հանդես է գալիս գոյություն ունեցող կարգերի քննադատման և գրաքննության վերացման պահանջով: Ըստ նրա՝ ոչ թե քաղաքացիական հասարակությունն (մասնավոր շահերի ոլորտը) է պետության (համընդհանուր շահերի ոլորտը) օտարման արդյունքը, ինչպես գտնում էր Հեգելը, այլ, հակառակը, մասնավոր շահն է իր կամքը թելադրում պետությանը, մինչդեռ քաղաքացիական հասարակությունում պետության էությունը որոշվում է համահասարակական կամարտահայտությամբ: Կ.Մարքսն, ի վերջո, պետությունը համարում է մարդու քաղաքական գործունեության օտարումը, իսկ պետական գործառույթների կատարումը՝ հասարակական մարդու սոցիալական և քաղաքական որակների դրսևորման եղանակ: Ուստի երբ պետությունը կտրվում է քաղաքացիական հասարակությունից և վերածվում է վերազգային ու վերհասարակական հաստատության, այնժամ քաղաքացիները կորցնում են իրենց քաղաքական որակներն ու քաղաքական դիմագիծը: Հիերարխիկ, դասախավային հասարակության կառուցվածքն անհատին դատապարտում է պասիվության՝ վերջինիս վերածելով կառավարվող օբյեկտի, այլ ոչ թե սոցիալ-քաղաքական կյանքի ձևերի ակտիվ սուբյեկտի կամ արարչի: Մարդու էության դրսևորումը, նրա ինքնահաստատումը կարող է ի հայտ գալ միայն պետության, հասարակության կառավարման ոլորտում: Մարքսը բերում է պրուսական պետության օրինակը, թե ինչպես պրուսական պետությունը՝ փորձում է շարքային քաղաքացիների մեջ ամրապնդել հլու-հնազանդ հպատակի հոգեբանությունը: Նման պետության մեջ գերիշխում են ոչ թե օրենքը, այլ արտոնությունները, ոչ թե համընդհանուր բարիքը, այլ մասնավոր շահը՝ դրանով իսկ ստեղծելով պայմաններ, երբ «բոլոր օբյեկտիվ նորմերը վերանում են և ամեն ինչ հանգեցվում է անձնական հարաբերության»[1]:

Խարազանելով Պրուսիայի բյուրոկրատական համակարգը՝ Մարքսը եզրակացնում է, որ բյուրոկրատական վարչակարգում նշանակովի չինովնիկներն են որոշում հասարակության, ժողովրդի պատմական ճակատագիրը: Իսկ երբ հասարակությունը հայտնվում է աղետալի վիճակում, ապա դրա պատճառները իշխող վերնախավը փնտրում է «ոչ թե կառավարման ոլորտում, այլ նրանից դուրս՝ մասնավոր-քաղաքացիական ոլորտում»[2]: Դասախավային սկզբունքով ղեկավարվող պրուսական պետությունը Մարքսն անվանում է, հեգելյան խոսքով՝ «հոգևոր առումով կենդանական թագավորություն»: Կենդանական աշխարհի նման՝ այստեղ ևս մի խավն ապրում է մյուսի հաշվին, նրանց միջև կապերը պայմանավորված են օրենքով ամրակայված անհավասարությամբ[3]: Եթե կենդանական աշխարհում աշխատող մեղուները, գրում է Մարքսը, ոչնչացնում են պորտաբույծ մեղուներին ու բոռերին, ապա այստեղ «… բոռերն են սպանում աշխատող մեղուներին, սպանում են նրանց՝ աշխատանքով ուժասպառ անելով …»[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 25:

[2] Նույն տեղում, էջ 205:

[3] Նույն տեղում, էջ 125:

[4] Նույն տեղում, էջ 126:

Ազատության հիմնախնդիրը Մարքսը քննարկում է սոցիալ-քաղաքական պայմանների հետ սերտ միասնության մեջ: Նա համոզված է, որ ազատությունը մարդու առանձնահատուկ իրավունքը կամ հատկանիշը չէ, այլ նրա հոգևոր, քաղաքական կեցության էությունը: Խոսքի, մամուլի ազատության ու քաղաքական օտարվածության փոխկապակցության խնդիրն արծարծելիս Մարքսը նշում է. «Գրաքննության ինստիտուտը և բյուրոկրատական ապարատը ճնշում են մամուլի ազատությունը, դրանով բռնանում են ազատ մամուլի վրա: Մինչդեռ ազատ մամուլը բուն ազատության, ժողովրդի ոգու բարոյական էությունն է»[1]: Գրաքննության ինստիտուտը և աստիճանակարգայնությունը, որ սահմանափակում են մամուլի ազատությունը, փաստորեն զբաղված են ազատ մամուլի վրա բռնաճնշումների գործադրմամբ: Մինչդեռ ազատ մամուլը ոչ այլ ինչ է, քան բուն ազատության բարոյական էության արտահայտությունը: Բյուրոկրատացված հասարակությունում անհատի քաղաքացիական արժեքն ու նշանակությունը կորսվում է, քանի որ հասարակության բոլոր անդամները հավասարեցված են միմյանց: «Հավասարեցված են,– շեշտում է Մարքսը,– իհարկե, ոչ մեզանից յուրաքանչյուրի արժանիքի ճանաչման իմաստով, այլ մեր ընդհանուր արժեզրկվածության իմաստով»[2]: Նա բյուրոկրատիզմի քննադատությունը եզրափակում է այսպես. «… բյուրոկրատիան կազմում է ... առանձնահատուկ, ներփակ հասարակություն՝ պետության մեջ»[3]: Մարքսը շեշտադրում է բյուրոկրատիայի հետևյալ գծերը՝ հրապարակայնության բացակայություն, հիերարխիկ կառուցվածք, ներփակ կորպորատիվ բնույթ, հեղինակության սրբագործում, չինովնիկների կարիերիզմ:

Մարքսյան դիպուկ բնութագրմամբ՝ բյուրոկրատիզմի հիմնախնդիրը ընդհանուր և մասնավոր շահերի հակադրության մեջ է: Համընդհանուր շահը առանձնանում է մասնավոր շահից (օտարվում է քաղաքացիական հասարակությունից)՝ վերածվելով «պատրանքային-համընդհանուր» շահի: Համընդհանուր շահի պատրանքայնությունը հնարավորություն է տալիս համընդհանուր շահը նենգափոխել ինչ-որ մեկի իրական, մասնավոր շահով: Նման հնարավորություն է տրվում այն ժամանակ, երբ առանձին անհատն անկարող է դառնում մասնակցելու կառավարման քաղաքական գործառույթներին, երբ համընդհանուր շահը ձեռք է բերում ինքնուրույն, առանձին անհատների իրավասությունից անկախ գոյություն, երբ համընդհանուր շահը բռնատիրվում է որոշակի սոցիալական խմբի կողմից: Բյուրոկրատիզմի հաղթահարումը Կ.Մարքսն առնչում է ոչ թե մասնավոր շահը համընդհանուրին ենթարկելու, այլ դրանց իրական նույնությանը հասնելու հետ: Եթե Հեգելը գտնում էր, որ բյուրոկրատական չարաշահումների վերացումը հնարավոր է, եթե վերևից վերահսկողությունը լրացվի ներքևից վերահսկողությամբ, ապա Կ.Մարքսը դա անբավարար է համարում: Ըստ նրա՝ բյուրոկրատիայի ոչնչացումը «հնարավոր է միայն այն պայմաններում, երբ մասնահատուկ շահը իրականում դառնում է համընդհանուր շահ»[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 41-42, 58, 65, 79:

[2] Նույն տեղում, էջ 79:

[3] Նույն տեղում:

[4] Маркс К., Энгельс Ф. Соч. 2-е изд. т. 1, с. 273.

Մարքսը պետությունից քաղաքացիական հասարակության օտարման վերացումը կապում էր ապագա հասարակության հետ, որն անվանում էր ժողովրդավարություն՝ այդ հասկացության ներքո հասկանալով ժողովրդի ազատ ինքնորոշումը: Ըստ նրա ժողովրդավարության էությունը՝ «սոցիալականացված մարդն» է[1], այսինքն՝ այն մարդը, ով իրեն է վերադարձրել պետությունից օտարված (ավելի ստույգ՝ «օտարեցված») իր հասարակական էությունը: Հասարակական էությունը որոշվում է համընդհանուր շահի միջոցով: Իսկ ժողովրդավարության հաստատումը, գտնում է Մարքսը, հնարավոր է միայն հեղափոխությամբ: Նա առաջադրում է ժողովրդավարության խնդիրը՝ քաղաքական օտարման ոչնչացումը, օտարում, որը նույնական է այստեղ մարդկային էության օտարմանը: Օտարման հաղթահարման պրոբլեմը Մարքսը սերտորեն առնչում է տարբեր շահեր լուծելու հետ: Օտարումը, ըստ նրա, կարող է վերացվել միայն այն ժամանակ, երբ մասնավոր շահերը դառնան ընդհանուր շահեր: Իսկ դա օտարման վերառումը կապում է մասնավոր սեփականության վերացման հետ[2]:

Ուշագրավ է, որ 1842-43 թթ. աշխատություններում՝ վերլուծելով կրոնական օտարումը՝ այնուհետև անցնում է քաղաքական օտարման ուսումնասիրմանը: Հեգելյան քննադատությունը և պետության ու քաղաքացիական հասարակության փոխկապակցվածության ըմբռնման հիմնավորումը Կ.Մարքսին բերում են այն հետևության, որ քաղաքացիական հասարակության նկատմամբ գերակա մասնավոր շահն է իր կամքը թելադրում պետությանը և որոշում պետական շահը, որն, ըստ էության, մասնավոր սեփականության շահն է: Ի վերջո, օտարման «վերնաշենքային» ձևերի (կրոնական, քաղաքական) արմատների որոնումները նրան ուղղորդում են դեպի տնտեսության վերլուծությունը:

Կ.Մարքսի «Գերմանո-ֆրանսիական տարեգրքի» հոդվածներում ոչ միայն արձանագրվում է օտարման իրավիճակը, այլև առաջադրվում է դրա հաղթահարման ուղին: Նշված է, որ քաղաքական ազատագրումը (բուրժուական հեղափոխությունը) կարող է վերացնել օտարման քաղաքական և կրոնական ձևերը, բայց չի կարող վերացնել ողջ մարդկային էության օտարումը, որը չի հանգում կամ հավասարվում քաղաքական էությանը: Մարքսի «1844 թ. տնտեսագիտական-փիլիսոփայական ձեռագրերում», ըստ Ֆրոմի, երևան են գալիս օտարման մարքսյան հայեցակերպի բնորոշ գծերը: Նախ՝ «… մարդու համար աշխարհը (բնությունը, իրերը, նա ինքը և ուրիշ մարդիկ) դառնում են օտար»: Երկրորդ, «… նա իրեն չի զգում սեփական գործողությունների սուբյեկտ, զգացող, սիրող անձնավորություն …»: Երրորդ՝ «… նա իրեն զգում է միայն իր կողմից ստեղծված իրերի մեջ՝ իբրև իր ուժի դրսևորման արտաքին օբյեկտ: Ինքն իր հետ առնչվում է իրեն շրջապատելով միայն իր ստեղծագործության արգասիքներով»[3]: Այսպիսով, Մարքսը կրոնական օտարումից անցում է կատարում աշխատանքի օտարմանը: «Աշխատանքի օտարման» հասկացությամբ նա նկատի ունի հետևյալ գործընթացները՝ սեփական աշխատանքից, նրա արդյուն-

---

[1] Նույն տեղում, էջ 252:

[2] Նույն տեղում, էջ 428:

[3] Фромм Э. Революция надежды. Избавление от иллюзий. М.: Айрис-пресс, 2005, с. 223

քից արտադրողի առանձնացումը, պատկանելության զգացումի կորուստը. «Նրա (բանվորի) աշխատանքը դառնում է առարկա, որը ձեռք է բերում արտաքին գոյություն»[1]: Ընդ որում, «աշխատանքի արտաքին բնույթը բանվորի համար այն է, որ այդ աշխատանքը իրեն չի պատկանում, այլ ուրիշին, և աշխատանքի գործընթացում ինքը պատկանում է ոչ թե իրեն, այլ ուրիշին»:[2] Այնուհետև, աշխատողը կախման մեջ է ընկնում իրենից առանձնացած աշխատանքից՝ նրա արդյունքից («Առարկայացումը հանդես է գալիս որպես առարկայի կորուստ և առարկայի կողմից ստրկացում»)[3], նման կախումից և ենթակայությունից ձևախեղվում է աշխատողի անձը («… իր աշխատանքում ոչ թե երջանիկ է զգում իրեն, այլ դժբախտ»)[4], աշխատողը օտարված վերաբերմունք է դրսևորում աշխատանքի՝ արդյունքի նկատմամբ («Բանվորն իր աշխատանքի արդյունքին վերաբերվում է ինչպես օտար առարկայի»)[5], ի վերջո, տեղի է ունենում աշխատանքի ապաառարկայացում, գործունեության, նրա խթանների և արդյունքների տարբերակում. «Հենց որ դադարում է աշխատանքի նկատմամբ ֆիզիկական և այլ կարգի հարկադրանքը, աշխատանքից փախչում են, ինչպես ժանտախտից»[6]:

Այսպիսով, աշխատանքի արդյունքի օտարումն արտադրողից հանգեցնում է աշխատանքի արդյունքը տնօրինող սեփականատիրոջ տիրապետության հաստատմանը: «Մարդու օտարումը,– նշում է Մարքսը,– ընդհանրապես ցանկացած հարաբերություն … իրացվում, բացահայտվում է միայն մարդու և ուրիշ մարդկանց հարաբերությունների միջոցով»[7]: Ըստ Մարքսի, ի հետևանս աշխատանքի օտարման մարդը (բանվորը) օտարվում է սեփական ինքնությունից, մերձավորներից և բնությունից: Աշխատանքի օտարման պատճառով ձևախեղվում է մարդու ազատ ու գիտակից գործունեությունը՝ վերածվելով օտարված գործունեության, կամ ընդամենը գոյատևման միջոցի: Կարող ենք ասել, որ նա ամենևին չի սահմանափակվում աշխատանքի օտարման կամ՝ մարդու կողմից ստեղծված արդյունքների հանդեպ օտարման կերպի նկարագրմամբ: Ուշադրություն է հրավիրում համակողմանի օտարման, մերձավորներից մարդու օտարման, առհասարակ օտարման բարոյական և հոգեբանական պրոբլեմների վրա՝ համոզված լինելով, որ օտարումը հիմնախախտում և խեղաթյուրում է մարդկային բոլոր արժեքներ առհասարակ: Փողի, սեփականության, շահույթի և այլնի գերակայության պայմաններում մարդն անկարող է դառնում յուրացնելու իսկական բարոյական, քաղաքական արժեքները, քանզի գործունեության հիմնական շարժառիթն է դառնում փողը, ուստի կարող ենք հավաստել, որ արդյունաբերական հասարակության արժեքների համակարգը՝ մարդու իրավունքների ճանաչման քողի տակ, ըստ էության հաստատում է մարդու օտարումը:

---

[1] Маркс К., Энгельс Ф. Соч. 2-е изд. т. 42, с 88.

[2] Նույն տեղում, էջ 91:

[3] Նույն տեղում, էջ 88:

[4] Նույն տեղում, էջ 100:

[5] Նույն տեղում, էջ 88:

[6] Նույն տեղում, էջ 91:

[7] К.Маркс и Ф.Энгельс. Соч., 2-е изд., т.42, с.95.

Կ. Մարքսը փողը բնորոշում է որպես մարդկային էության օտարման դրսևորում: Փողային ֆետիշիզմը, որպես օտարման ձև, նա համեմատում է փողի աստվածացման հետ՝ «Փողի աստվածային ուժը փողի էության՝ որպես մարդու օտարված, օտարող էության մեջ է»[1]: Փողային ֆետիշիզմը օտարման մի տեսակ է՝ հիմնված առուծախի սկզբունքին և սպառողական հոգեբանությանը: «Մասնավոր սեփականությունը, – ընդգծել է Մարքսը, – մեզ այնքան հիմար ու միակողմանի է դարձրել, որ որևէ առարկա *մերն* է միայն այն ժամանակ, երբ մենք տիրապետում ենք, այսինքն՝ երբ այն գոյություն ունի մեզ համար որպես կապիտալ, կամ երբ մենք անմիջականորեն տիրում ենք նրան, ուտում ենք այն, խմում ենք, հագնում ենք, ապրում ենք նրա մեջ և այլն, մի խոսքով, երբ մենք այն ապրում ենք ... Այդ պատճառով էլ *բոլոր* ֆիզիկական և հոգևոր զգացողություններին փոխարինել է այդ բոլոր զգացողությունների պարզ օտարումը՝ *տիրապետման* զգացողությունը»[2]:

Օտարումը, պիտի ասել, ձևախեղում է ցանկացած մարդու սպառողական արժեբանությունը, այդ թվում՝ նաև բանվորի, որին ևս բնորոշ է դառնում «դիզելու ծարավը», և ինչպես նշում է Մարքսը. «Աշխատավարձի բարձրացումը բանվորի մոտ առաջացնում է հարստանալու կապիտալիստական ծարավ»[3]:

«Տնտեսագիտական-փիլիսոփայական ձեռագրերում» նա բնորոշել է օտարման հիմնական ձևերը. 1) տնտեսական՝ օտարումն աշխատանքի արդյունքից, աշխատանքի գործընթացից, 2) սոցիալական՝ օտարումը հասարակական հարաբերությունների էությունից, մարդը մարդուց, 3) քաղաքական՝ ժողովրդի օտարումը պետությունից, բյուրոկրատիզմը, 4) գիտակցության մեջ՝ կրոնական օտարում, փողային ֆետիշիզմ՝ որպես օտարված գիտակցության ձևերից մեկը:

Հարկ է հավելել, որ Մարքսը հանգամանորեն չի ուսումնասիրել օտարման ածանցյալ ձևերը: Սակայն բացահայտված է օտարման գլխավոր գաղտնիքը՝ աշխատանքի օտարումը: «Ձեռագրերում» նա անդրադառձել է նաև օտարման հաղթահարման հարցին՝ կապված ապագա հասարակության հետ: Թեև չի կոնկրետացնում «կոմունիզմ», «սոցիալիզմ», «հումանիզմ» հասկացությունները, բայց ապագա հասարակության բուն նպատակը, ըստ նրա, մարդու՝ որպես անձնավորության ստեղծագործական զարգացման մեջ է, մասնավոր սեփականության ոչնչացման, հասարակական սեփականությամբ այն փոխարինելու և նախորդ զարգացման ողջ հարստությունը պահպանելու մեջ[4]:

Մարքսն իր «Ձեռագրերում» տվել է օտարման հեգելյան հայեցակարգի սպառիչ քննադատությունը: Օտարման վերիմաստավորման դիրքերից Մարքսը քննադատել է Հեգելի ողջ իդեալիստական համակարգը օտարման իդեալիստական ըմբռնման համար, քանի որ Հեգելի մոտ օտարման սուբյեկտը՝ բացարձակ գաղափարը, ոգին է, իսկ օտարումը նույնացվում է առարկայացման հետ. հետևաբար, բացակայում է

---

[1] Նույն տեղում, էջ 149:

[2] Նույն տեղում, էջ 120:

[3] Նույն տեղում, էջ 51:

[4] Նույն տեղում, էջ 116:

իրական օտարման կապը Համաշխարհային ոգու ընդհանուր փիլիսոփայական սխեմայի հետ[1]: Ի հակակշիռ դրան, նա բարձր է գնահատել Ֆոյերբախի գաղափարները, որոնք մեծապես հիմք են դարձել օտարման մարքսյան ըմբռնումների համար, արտահայտվել են, մասնավորապես, «Տնտեսագիտական-փիլիսոփայական ձեռագրերում» (1844), որտեղ շարադրվել է աշխատանքի օտարման հասկացության էվոլյուցիան մարքսյան տեսական համակարգում:

Հետագա աշխատանքներում, հատկապես «Կապիտալի» մեջ, Մարքսը ցույց տվեց, որ շուկայական հարաբերությունների զարգացումը հանգեցրել է մարդկային գործունեության և դրա արդյունքների վերածմանը փոխանակային արժեքի, այսինքն՝ ապրանքի (ապրանքային ֆետիշիզմ): Չկա օտարում առանց ապրանքային ֆետիշիզմի, ինչպես որ չկա ապրանքային ֆետիշիզմ առանց օտարման: Մարքսը մատնանշում է, որ ապրանքային ֆետիշիզմի ակունքները պետք է փնտրել սոցիալական հարաբերությունների իրայնացման, այսինքն այն գործընթացի մեջ, ուր մարդն իջեցվում է իրի կամ իրային գործառույթներ կատարողի մակարդակի[2]: Ականավոր փիլիսոփա Դ.Լուկաչն իր «Հասարակական կեցության գոյաբանությունը» գրքում իրավացիորեն նշում է. «Ապրանքային ֆետիշիզմը օտարման գլխավոր բովանդակությունն է, իսկ օտարման հաղթահարումը կապվում է հասարակական գիտակցության ապաֆետիշացման գործընթացի հետ»[3]: Ապրանքադրամային հարաբերությունների տիրապետման պայմաններում մարդիկ ոչ թե անձնավորություններ են՝ մտավոր կարողությունների, կամքի, յուրատեսակ խառնվածքի կրողներ, այլ այս կամ այն ապրանքի «լիազոր ներկայացուցիչներ», որոնք առանձին անուն չունեն: Մարդկանց վրա իշխող տնտեսական հարաբերությունները սկզբնապես ընդունում են «իրային ուժերի տեսք». իսկ ավելի ուշ՝ ոգեշնչյալ «գերիզոր իրերի» տեսք[4]: Եվ, ինչպես դիպուկ նշում է Կ.Մարքսը, «իրն այժմ վերածվել է իսկական հասարակական էակի, որին նա (իմա՝ բանվորը) ձգտում է կլանել, սակայն իրը խժռում է նրան»[5]:

Մարքսն ուտոպիստին վայել ներքին համոզվածությամբ օտարման վերջնական հաղթահարումը տեսնում է մարդկային հարաբերությունների ապրանքային հենահիմքի ոչնչացման, «մարդկանց ազատ-հանրայնացված միության» գաղափարների, նյութական արտադրության նկատմամբ մարդկանց կողմից «գիտակցված պլանաչափ հսկողության» հաստատման մեջ: Աշխատանքի օտարման էական հակասությունը՝ հասարակության զարգացումն ի հաշիվ «ապրանքայնացող» անհատի, ի վերջո, իր հանգուցալուծումը պետք է գտնի հասարակական այնպիսի ձևի մեջ, որի համար ինքնաբավ նպատակ դառնա հենց մարդկային անհատի համակողմանի զարգացումը: Այս համատեքստում Մարքսը կիրառում է «կոմունիզմ» մոգական

---

[1] Նույն տեղում, էջ 157:

[2] Կ. Մարքս, Կապիտալ, հ.1, էջ 81:

[3] Поцелуев С.П., Д.Лукач. О становлении гегелевской концепции отчуждения и позиция Ю.Хабермаса. – Историко-философский ежегодник. М.: Наука, 1992, с.115.

[4] К.Маркс и Ф.Энгельс. Соч. т.46, ч.II, с.156.

[5] Նույն տեղում, էջ 486:

բառը՝ կոմունիզմը հռչակելով որպես հասարակություն, որտեղ վերջ է գտնում աշխատանքի օտարումը: Աշխատանքը դիտվում է իբրև ազատ ինքնագործունեություն կամ իբրև համընդհանուր, անմիջականորեն հասարակական աշխատանք[1]:

Մարքսը հանիրավի ենթադրում էր, թե կապիտալիզմը մարդու նախապատմության վերջին փուլն է, որին կհաջորդի կոմունիզմը՝ մարդկության «իսկական պատմությունը», «ազատության թագավորությունը»: Սակայն տեսականորեն և գործնականորեն սնանկ ու անհիմն է չօտարված աշխատանքի և չօտարված անհատի, ինչպես նաև «սոցիալական դրախտի» մարքսյան ուտոպիան:

Սարգիս Կարապետյան, Օտարման հեգելյան և մարքսյան հայեցակերպերի համեմատական վերլուծություն (քաղաքագիտական դիտանկյուն) – Հոդվածում համեմատական վերլուծության են ենթարկվում Գ. Հեգելի և Կ. Մարքսի օտարման հայեցակերպերը: Ցույց է տրվում, որ Հեգելը օտարումը հասկանում էր բացարձակ ինքնագիտակցության համատեքստում: Ըստ Մարքսի՝ օտարումն ի հայտ է գալիս վարձու աշխատանքի առաջացմամբ, որը աշխատանքի բաժանման արդյունք է հանդիսանում, մասնավոր սեփականության առաջացմամբ և ապրանքա-փողային հարաբերությունների զարգացմամբ:

Саргис Карапетян, Сравнительный анализ концепции отчуждения Г.Гегеля и К.Маркса (политологический аспект) – Показывается, что Гегель понимал отчуждение в контексте познания абсолютным духом самого себя. А у Маркса отчуждение возникает с появлением наемного труда, являющегося результатом разделения труда, возникновения частной собственности и развития товарно-денежных отношений.

Sargis Karapetyan, The comparative analysis of G.Hegel's and K.Marx's conception of alienation (politological aspect) – It is shown that Hegel comprehended the alienation in the context of absolute self-knowing. According to Marx, the alienation occurs with the appearance of wage labor, which is the result of division of labor, with the beginning of the private property and development of commodity monetary relationship.

Սարգիս Կարապետյան ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

[1] Маркс К. и Энгельс Ф. Соч., 2-е изд., т.46, ч.II, с.110, ч.I, с.115 и др.